տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը (Համաձայնագիրը).

3.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում ,եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները.

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել սույն պայմանագրին և Համաձայնագրերին համապատասխան մատակարարված ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում փոխանցել սույն պայմանագրով նախատեսված կանխավճարը. իսկ մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Սույն պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները :

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք ՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանգրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.
3.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է սույն պայմանագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից պայմանգիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1Գնորդին հանձնել ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:
3.4.2 Սույն պայմանգրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը գնորդին մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ) և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում :

3.4.4 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք: